

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2022 թվականի
ապրիլի 28-ին կայացած գիտական Խորհրդի N10 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 26-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքն ամբիոններում (նախապաշտպանությունների կազմակերպումն ու արդյունքները) /զեկ.ամբիոնի վարիչներ/
2. Սերվսի ամբիոնի վարիչի հաշվետվությունն ընթացիկ տարում ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ /զեկ.ամբ.վարիչ Ս.Ռ.Սուվարյան/
3. Գիտական հաղորդում (Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները) /զեկ.Էլմիրա Վարդանյան/
4. Ընթացիկ հարցեր (ֆակուլտետում գործող բոլոր մասնագիտությունների ուղղությամբ հեռակա ուսուցման ամենամյա կազմակերպում)

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՄԵՑԻՆ.** Սերվիսի ամբ.վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչ դոց.Պ.Գ.Դավթյանի, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ.վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի, Երկրաֆիզիկայի ամբ.վարիչ դոց.Ս.Ս.Մկրտչյանի, Ջրաերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբիոնի դոց.Ա.Հ.Աղիսյանի, Ռեգիոնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբ.վարիչ դոց.Շ.Վ.Խաչատրյանի Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը ամբիոններում **մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման վերաբերյալ:** Ամբիոնի վարիչները նշեցին, որ նախապաշտպանությանը ներկայացված աշխատանքները

բավարարում են ներկայացվող պահանջներին, միննույն ժամանակ նշեցին, որ ուսանողների բանավոր խոսքը մշակման և հղկման կարիք ունի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. դեկան Մ.Գրիգորյանը ներկայացրեց ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը Moodle համակարգ տեղադրելու որոշման վերաբերյալ: Հանձնարարվեց ամբիոնի վարիչներին այն իրականացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2. ԼՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերբերյալ: (Հաշվետվությունը կցվում է):

ԵԼՈՒՅԹ ՈՆԵՑԱՆ. Դոց.դոց.,Ս.Ս.Քելյանը, Վ.Վ.Գրիգորյանը, Պ.Գ.Դավթյանը, պրոֆ.պրոֆ., Ա.Ավագյանը, Վ.Պ.Վարդանյանը, դեկան Մ.Ա.Գրիգորյանը նշեցին, որ ամբիոնի վարիչ Սեյրան Սուվարյանն ունի կազմակերպչական և գիտական մեծ ներուժ ամբիոնում աշխատանքներ կազմակերպելու ուղղությամբ: Մեծ ծավալի աշխատանք է տարվում դիմորդների և շրջանավարտների հետ, մոտիվացնում Սերվիս մասնագիտությունն ընտրելու հարցում: Ֆակուլտետում միակ ամբիոնն է, որտեղ ուսուցումը կազմակերպվում է նաև անգլերեն լեզվով: Ուսումնական գիտական գործընթացն ամբիոնում գտնվում է բարձր մակարդակի վրա: Նրանք բարձր գնահատեցին ամբիոնում կատարված աշխատանքը, առաջարկեցին ընդունել այն և գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել **Սերվիսի** ամբիոնի վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել բավարար:

3. ԼՄԵՑԻՆ. Ասպիրանտ Էլմիրա Վարդանյանի գիտական հաղորդումը **Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և էկոլոգիական բարելավման ուղիները** թեմայի վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքի վերաբերյալ կան թե դրական և թե բացասական կարծիքներ: -Կան հիմնավորված դիտողություններ, որոնց հետ համակարծիք եմ և դրանք ուղղելու համար անհրաժեշտ է ժամանակ: Էլ.Վարդանյանը խնդրեց **Տավուշի մարզի լանդշաֆտների արդի վիճակը և**

Էկոլոգիական բարելավման ուղիները գիտական թեմայի քննարկումը հետաձգել և հնարավորություն տալ արված դիտողություններն ուղղելու:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

4.1 ԼՄԵՑԻՆ. Դեկան Մ.Ա.Գրիգորյանի հաղորդումը 2022-2023 ուս.տարում հեռակա ուսուցման ընդունելությունը կազմակերպելու վերաբերյալ:

- Չհիմնավորված և առանց ֆակուլտետի հետ խորհրդակցելու որոշում է կայացվել մի շարք մասնագիտություններով հեռակա ուսուցում չկազմակերպելու վերաբերյալ, որը գտնում եմ ճիշտ չէ: Բավականին մեծ թվով երիտասարդներ են աշխատում արդյունաբերության մեջ, հատկապես մեր մասնագիտություններով, ովքեր առկա սովորելու հնարավորություն չունեն: Ես գտնում եմ, որ մենք ունենք հնարավորություն ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների ուղղությամբ ամեն տարի կազմակերպելու ընդունելություն:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Դիմել ԵՊՀ ռեկտորատին աջակցելու ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների ուղղությամբ ամեն տարի հեռակա ուսուցմամբ ընդունելություն կազմակերպելու հարցով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել առաջարկությունը և դիմել ԵՊՀ ռեկտորատին աջակցելու՝ ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների ուղղությամբ ամեն տարի հեռակա ուսուցմամբ ընդունելություն կազմակերպելու:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան